# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № 37/37.2/3909-15
16.03.2015թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
«ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եղիազարյան

Ի պատասխան Ձեր 16.03.15թ. № 37/37.2/3909-15 գրության՝ քննության առնելով «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ)՝ հայտնում ենք հետևյալը.

«Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանվում է, որ եթե հայտը չի համապատասխանում սահմանված պահանջներին, ապա լիազորված մարմինը, հայտն ստանալուց հետո հայտատուին ուղարկում է հարցում՝ ուղղված և պակաս փաստաթղթերը երկու ամսվա ընթացքում ներկայացնելու առաջարկությամբ և հարցմանը համապատասխան լրացուցիչ կամ ճշգրտված նյութերը երկու ամսվա ընթացքում չներկայացնելու դեպքում միայն հայտը համարվում է անվավեր:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ տվյալ դեպքում նախատեսված 2 ամիս ժամկետը սահմանված է հայտատուի իրավունքի իրացման համար և, ըստ էության, չի վերաբերում պետական մարմնի վարչարարությանը՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում ««երկու» բառը փոխարինել «մեկ» բառով» արտահայտությունը հանել՝ թողնելով անփոփոխ հայտատուի՝ հայտը անվավեր համարելուց

Կատարող՝ Լուսինե Վահրամյան
Գործարար միջավայրի բարելավման վարչություն
011 597134

խուսափելու նպատակով ճշգրտված նյութերը երկու ամսվա ընթացքում ներկայացնելու վերաբերյալ սահմանված դրույթը:

Միաժամանակ, կից տրամադրվում են Նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***ընդհանուր առմամբ դրական ազդեցություն***՝ հաշվի առնելով այն հանգամանքը որ Նախագծով հստակեցվում են սելեկցիոն նվաճումների իրավական պահպանության ու օգտագործման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝ ամրագրվում է սելեկցիոն նվաճման հայտը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորությունը և առաջարկվում է կրճատել հայտի փորձաքննության ժամկետները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կատարվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել սելեկցիոն նվաճման արտոնագրի հայտ ներկայացնելու, արտոնագիր ստանալու և դա գործողության մեջ պահելու, ինչպես նաև արտոնագրի հետ կապված այլ իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններ կատարելու համար տուրքեր գանձելու մասին դրույթները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ